



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

Առաջնորդ՝
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊՍ ՆԱՃԱՐԵԱՆ

Primate
ARCHBISHOP HAIGAZOUN NAJARIAN

SN 076/04/19

Ապրիլ 2019

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ ՏԷՐ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՃԱՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՍԸ
ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

«Աստուած մեզի հանդէպ ունեցած իր սէրը յայտնեց անով, որ, մինչդեռ մեղաւոր էինք՝ Քրիստոս մեռաւ մեզի համար... բայց զիտեք նաեւ որ Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն ... նոյնպէս եւ դուք ձեզի մեռած համարեցէք մեղքի համար, բայց ողջ՝ Աստուծոյ համար, մեր Տէր Յիսուս Քրիստոսով» (Հռոմ 5:8; 6:9,11).

Միբելի Հաւատացեալ ժողովուրդ,

Մեր թեմի եկեղեցականներու, Թեմական Խորհուրդի եւ բոլոր թեմական կառոյցներու անունով կը շնորհատրենք Ձեզ Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հրաշափառ Յարութեան Տօնին առթիւ:

Մեր Տիրոջ Յարութիւնը խարիսխն է մեր հաւատքին, այդպէս էր Առաքեալներուն համար եւ այդպէս՝ սերունդէ սերունդ բոլոր Քրիստոնէաներուն համար:

Յարութիւնը կը յայտարարէ Կեանքի յաղթանակը ընդդէմ մահու, լոյսի ճառագայթմամբ կը շեփորահարէ խաւարի անեացումը, Տէրը Իր անձընծայումովը խաչին վրայ կը պատգամէ սիրոյ գերագոյն պատգամը, Իր խաչին վրայ հեղած արեամբ կը ջնջէ մեղքը՝ Սատանայի խարանը մարդկութեան ճակատէն, վերագտնելու կորուսեալ Դրախտը, վերադառնալու մեր Երկնաւոր Հօր:

Այս տարին նուիրուած է ի մասնաւորի Ընտանիքի գաղափարին: Յարուցեալ Տիրոջ սէրը եթէ չբնակի ընտանիքի երդիկէն ներս, մնացածը իզուր է: Գիտակից սէրը, յարգանքը, նուիրումը հնարաւոր կը դարձնեն ընտանիքի յաջող եւ երկար տարիներու գոյատեւումը: Տունէն կը սկսի նորածին մանուկի կրօնական եւ Հայեցի դաստիարակութիւնը, հոն է որ ան Հայ հաւատքի առաջին պատգամը պիտի ստանայ եւ օրինակ առնէ ձեզմէ. դուք էք որ անոր քայլերը պիտի առաջնորդէք դէպի մեր եկեղեցին, եւ հոն է որ մանուկը պիտի սնանի, աճի եւ զօրանայ իր հոգեւոր ժառանգութեամբ, զինուի Յարութեան լոյսով եւ յաղթանակի յոյսով դիմակալէ կեանքի գալիք փորձութիւնները:

Մեր աղօթքն է որ Յարուցեալ Տէրը մուտք գործէ ձեր սիրտերէն ներս, ոգեշնչէ ձեզ կեանքի յաղթանակով, հոն ուր վիստութիւն կայ ներշնչէ յոյս, ուր թուլութիւն՝ կորով, ուր վախ՝ քաջութիւն եւ ուր աստելութիւն՝ սէր: Զինուած մեր Տիրոջ պատգամներով եւ Յարութեան յաղթականի տեսլականով կրնանք յարատեւել որպէս անձ, ընտանիք, համայնք, Մփիւոք եւ Հայրենիք եւ մեր ներդրումը բերել աշխարհի գոյատեւման եւ բարիի վերջնական յաղթանակին:

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ, ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հայկազուն Արք. Նաճարեան
Առաջնորդ